ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոն

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Գևորգյան Ա.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավաբանական գիր

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Իրավաբանական գիր» առարկան հանդիսանում է հումանիտար, սոցիալական և տնտեսական ցիկլի կամընտրական դասընթաց: Իրավաբանական լավագույն կրթական համակարգերում կարևոր տեղ է զբաղեցնում իրավաբանական գիրը: Հատկապես իրավունքի ընդհանուր և ռոմանագերմանական համակարգերի միաձուլման պայմաններում պատշաճ իրավաբանական գրի խնդիրը հատուկ կարևորություն է ստանում:

«Իրավաբանական գիր» դասընթացը ուղղված է իրավաբանական բովանդակություն պարունակող տեքստերի կազմման հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև դատարանների որոշումների, նորմատիվ-իրավական ակտերի և պայմանագրերի տեքստերի գրագետ ձևակերպմանն ու խմբագրմանը: Նյութերը, որոնք ուսումնասիրվում են կուրսի ընթացքում նպատակաուղղված են իրավաբանական մտածողության զարգացմանը, ձևավորում են ստեղծարար մոտեցում դեպի իրավաբանական գիտությունը:

«Իրավաբանական գիր» դասընթացը սերտորեն կապված է Պետության և իրավունքի տեսություն, Քրեական դատավարություն, Քաղաքացիական դատավարություն, Վարչական դատավարություն, Իրավաբանական էթիկա, Տրամանբանություն, Հայոց լեզու (գրավոր խոսք) դասընթացների հետ

«Իրավաբանական գիր» դասընթացի նպատակն է ուսանողների մոտ իրավական բովանդակություն ունեցող տեքստերի շարադրման հմտությունների ձևավորում, դատական որոշումների, պայմանագրերի և նորմատիվ-իրավական ակտերի տեքստերի հավաքագրման, մշակման, խմբագրման հմտություններ:

«Իրավաբանակ գիր» դասընթացի հիմնական խնդիրներ են՝ որակավորված մասնագետի բազային կոմպետենցիաների ձևավորում, իրավական վերլուծություն կատարելու, իրավունքի նորմի բովանդակությունը բացահայտելու և այն փաստերի հետ համադրելու հմտություն, գրագետ իրավավերլուծական փաստաթղթեր կազմելու հմտություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան:

«Իրավաբանական գիր» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է դատավարական օրենսդրությունը և մասնավոր իրավահարաբերություն կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«Իրավաբանական գիր» դասընթացի առարկան՝ մասնավոր իրավունքի սուբյեկտների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են:

Դասընթացի մուտքային պահանջները:

«Իրավաբանական գիր» դասընթացի շրջանակներում առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, դատավարական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

- Պաշտոնական փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները.
- Իրավական վերլուծություն կատարելու, իրավական նորմի բովանդակության բացահայտման և փաստերի հետ համադրման առանձնահատկությունները

կարողանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված հմտությունները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն.
- Իրավաբանական բարդ լեզվով տեքստերը, նորմերը ներկայացնել պարզ, հստակ, մատչելի եղանակով՝ հատակ տարանջատելով վերաբերելի և ոչ վերաբերելի կարգավորումները,

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Տարբերել պաշտոնական փաստաթղթերը, ներկայացնել յուրաքանչյուրի կազմման առանձնահատկությունները, տարբերակել վավերապայմաններում առկա թերությունները.
- Արդյունավետորեն կիրառել IRAC մեթոդը բարդ իրավավերլուծության ժամանակ
- Հայացադիմում կազմել:

Դասավանդման եղանակները և մեթոդները:

«Իրավաբանական գիր» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն

է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Իրավաբանական գիր» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ 1 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 6 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**10**
1.1.1. Դասախոսություններ	**4**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**6**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**58**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 36 ժամ, կրեդիտ՝ «1» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար**	**Ինքնուրույն աշխատանք**

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

			պարապմունքներ	
1	2=3+4	3	4	
Թեմա 1. Պաշտոնական գրագրության առանձնահատկությունները 1. Պաշտոնական փաստաթղթերի ընդհանուր պահանջները 2.. Ստորև նշված փաստաթղթերի, իրավական ակտերի կազմման առանձնահատկությունները. հրաման, տեղեկանք, քաղվածք, որոշում, դիմում, հարցում, հարցման պատասխան, կարգ, կարգադրություն		1	2	10
Թեմա 2. Իրավաբանական գրագրություն։ Իրավավերլուծական փաստաթղթերի առանձնահատկությունները 1. Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավավերլուծական փաստաթուղթ 2. IRAC մեթոդի կիրառում 3. Հարցադրում։ Չափանիշներ, առանձնահատկություններ 4. Կանոն։ Չափանիշներ, առանձնահատկություններ 5. Վերլուծություն։ Չափանիշներ, մակարդակներ, հնարքներ 6. Եզրահանգում։ Չափանիշներ, առանձնահատկություններ		1	2	20
Թեմա 3. **Հայցադիմումի կազմում** 1.Հայցադիմումի ներածական մաս։ Դատարանի անվանում, կողմերի տվյալներ, հասցեների գրություն, անձնագրային տվյալներ		2	2	20

2.Գործի փաստեր: էական և ոչ էական փաստեր, փաստ-ապացույց կապ 3.Հայցապահանջի հիմքում դրված և վերաբերելի հանգամանքներ: Գրության առանձնահատկություններ 4.Հայցապահանջի իրավական հիմքեր: Կոնկրետ հղումներ, գրության առանձնահատկություններ 5.Վերլուծություն: Փաստերի և իրավանորմերի համադրում 6.Հայցապահանջ: Գրության առանձնահատկություններ 7.Հայցադիմումին կցվող փաստաթղթերի և ապացույցների ցանկ 8.Ստորագրություն, լիազորագիր՝ ստորագրության առանձնահատկության վերաբերյալ				**8**
Ընդամենը	**72**	**4**	**6**	**58**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Թեմա 1. Պաշտոնական գրագրության առանձնահատկությունները

1. Պաշտոնական փաստաթղթերի ընդհանուր պահանջները
2. Ստորև նշված փաստաթղթերի, իրավական ակտերի կազմման առանձնահատկությունները.
   հրաման, տեղեկանք, քաղվածք, որոշում, դիմում, հարցում, հարցման պատասխան, կարգ, կարգադրություն

Թեմա 2. Իրավաբանական գրագրություն: Իրավավերլուծական փաստաթղթերի առանձնահատկությունները

1. Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավավերլուծական փաստաթուղթ
2. IRAC մեթոդի կիրառում
3. Հարցադրում: Չափանիշներ, առանձնահատկություններ
4. Կանոն: Չափանիշներ, առանձնահատկություններ
5. Վերլուծություն: Չափանիշներ, մակարդակներ, հնարքներ
6. Եզրահանգում: Չափանիշներ, առանձնահատկություններ

Թեմա 3. Հայցադիմումի կազմում

1. Հայցադիմումի ներածական մաս: Դատարանի անվանում, կողմերի տվյալներ, հասցեների գրություն, անձնագրային տվյալներ
2. Գործի փաստեր: էական և ոչ էական փաստեր, փաստ-ապացույց կապ
3. Հայցապահանջի հիմքում դրված և վերաբերելի հանգամանքներ: Գրության առանձնահատկություններ
4. Հայցապահանջի իրավական հիմքեր: Կոնկրետ հղումներ, գրության առանձնահատկություններ
5. Վերլուծություն: Փաստերի և իրավանորմերի համադրում
6. Հայցապահանջ: Գրության առանձնահատկություններ
7. Հայցադիմումին կցվող փաստաթղթերի և ապացույցների ցանկ
8. Ստորագրություն, լիազորագիր՝ ստորագրության առանձնահատկության վերաբերյալ

4. Գրականության ցանկ

Հիմնական գրականություն՝

1. Յու. Ավետիսյան, Ա. Մկրտչյան, Լ. Սարգսյան, **Իրավաբանական գրագրության լեզուն,** Երևան, 2019 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է lawlibrary.info կայքում:)
2. **Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ,** Երևան, 2012 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է lawlibrary.info կայքում:)
3. Վ. Գաբրիելյան, **Գրավոր խոսք,** Երևան, 2012 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է parliament.am կայքում:)
4. Լ. Միրզոյան, **Կյանքի ուղեցույց** (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, 2012

5. Ջ. Մոլիտերնո, Ռ. Մելիքյան, Դ. Մելքոնյան, **Իրավաբանական գիր և վերլուծություն,** Երևան, 2010

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. T. Michael, Basic **Elements of Legal Writing,** Indonesia, 2015 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.academia.edu/30253452/BASIC_ELEMENTS_OF_LEGAL_WRITING կայքում:)
2. H. Shapo, M. Walter, E. Fajans, **Writing and Analysis in the Law,** New York, 2009
3. **Effective Legal Writing Guide,** USA, 1981 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.gao.gov/assets/180/172681.pdf կայքում:)
4. S. Verma, M. Wani, **Legal Research and Methododlogy,** USA, 2001 (Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.academia.edu/38460017/Legal_Research_and_Methodology.pdf կայքում:)
5. Васильева Т.М., Воробьева О.В., Хазова О.А., Юридическое письмо, учебник, Москва, 2010
6. **Особенности юридической техники при составлении документов,** Под ред. Л.А.Воскобитовой, И.Н.Лукьяновой, Л.П.Михайловой, Москва, 2006
7. Ивакина Н.Н., **Профессиональная речь юриста,** учебное пособие, Москва, 1997
8. Мучник Б.С., **Культура письменной речи: формирование стилистического мышления,** Москва, 1996
9. Соболева А.К., **За культуру письменной речи юриста**, Москва, 2008
10. Рубинштейн Б.А., **Особенности юридической техники подготовки ходатайств и заявлений по уголовным делам,** Москва, 2006

Էլեկտրոնային ռեսուրս՝

1. https://www.arlis.am/
2. http://www.concourt.am/
3. https://www.court.am/
4. https://www.datalex.am/

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Հայցադիմումի կազմում։ Տրվում է գործի փաստերը, որոնց շրջանակում ուսանողը պետք է հայցադիմում կազմի՝ առանձնացնելով.
    1) հայցադիմումի ներածական մասը.
    2) հայցապահանջի հիմքում դրված փաստերը.
    3) հայցապահանջի իրավական հիմքերը և հիմնավորումները.
    4) հայցապահանջը.
    5) հայցադիմումին կցվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը.
    6) ստորագրության հատվածը։

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները։

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ։

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն։

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում։

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն։

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների իրավական վերլուծություն կատարելու, իրավավերլուծական (դատավարական) փաստաթուղթ կազմելու հմտությունները։